«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» 10 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

N ՍՑ-ԳԲԽ-09/13 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ ֆինանսների նախարարի 02.04.2012թ. N 1 պաշտոնական պարզաբանմամբ և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գոռ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Գոռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 31.07.2013թ. թիվ 09/032-1060 գրությամբ դիմել է «Գոռ» ՍՊԸ-ին:

«Գոռ» ՍՊԸ-ն 30.08.2013թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 2012 թվականի մարտի 5-ին կնքվել է ապրանքի մատակարարման «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2012թ. դեկտեմբերի 25-ը, իսկ գնման ժամանակացույցով ապրանքի 1-ին խմբաքանակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2012թ. 1-ին եռամսյակը՝ ընդ որում, առանց նշելու մատակարարման ենթակա ապրանքների չափսերը:

«Գոռ» ՍՊԸ-ն հայտնել է, որ պայմանագրի տեխնիկական բնութագրի NN 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքներից մինչև 2012թ. ապրիլ մատակարարվել է 54 հատ կիտել և 70 հատ բաճկոն:

«Գոռ» ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված ապրանքների ժամանակին մատակարարումը իրականացնելու նպատակով, սեփական նախաձեռնությամբ 07.03.2012թ. N 0015 գրությամբ Պատվիրատուին խնդրել է տրամադրել մատակարարվելիք

ապրանքների չափսերը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 110-րդ կետի 7-րդ ենթակետը՝ երկարաձգել ապրանքի 1-ին խմբաքանակի մատակարարման ժամկետը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 07.03.2012թ. N ԴԴ-1-Ե-1070 գրությամբ հայտնել է, որ պայմանագրով նախատեսված պարտավորությունների ժամկետի երկարաձգումը անընդունելի է:

«Գոռ» ՍՊԸ-ն նշել է, որ Կարգի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները պահպանելու դեպքում ապրանքի 1-ին խմբաքանակի մատակարարման ժամկետ պետք է սահմանվեր առնվազն մինչև 2012 թվականի ապրիլի 20-ը և այդ դեպքում «Գոռ» ՍՊԸ-ի կողմից ապրիլի 4-ին և ապրիլի 10-ին մատակարարվածը խախտում չէր կարող դիտվել, քանի որ մատակարարումը կատարված կլիներ ժամկետում:

«Գոռ» ՍՊԸ-ն ապրիլի 28-ի «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին ուղղված գրությամբ պատրաստակամություն է հայտնել վճարել պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժերը և մատակարարել ապրանքի 1-ին խմբաքանակի մնացած մասը, սակայն «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից որոշում է կայացվել միակողմանի լուծել 05.03.2012թ. կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով գնման պայմանագիրը:

«Գոռ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Կարգի պահանջները պահպանելու և 1-ին փուլի կատարման ժամկետը 20.04.2012թ. սահմանելու դեպքում Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի դրույթը կիրառելի չէր լինի, քանի որ 1-ին խմբաքանակի մի մասը արդեն իսկ մատակարարվել է (04.04.2012թ. և 10.04.2012թ.), իսկ մյուս մասի մատակարարման դեպքում կստացվի, որ Ընկերությունը պայմանագրով ստանաձնած պարտավորությունը խախտել է ընդամենը մեկ անգամ:

Միաժամանակ «Գոռ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ պետական գնումների բնագավառում ունի բազմամյա փորձ և Ընկերության ստանձնած բոլոր պարտավորությունները մշտապես կատարվել են ժամանակին:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ «Գոռ» ՍՊԸ-ն խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կենտրոնում 2013թ. օգոստոսի 30-ին ժամը 16:30-ին և 17.03.2015թ. ժամը 15:30-ին ՍՑ-ԳԲԽ 09/13 բողոքի շրջանակներում կազմակերպված լսումների ընթացքում «Գոռ» ՍՊԸ-ի պնդեց իր գրություններով ներկայացրած փաստարկները:

«Գոռ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագիրը կնքելուց հետո 07.03.2012թ. «Գոռ» ՍՊԸ-ն դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը, սակայն Պատվիրատուն հրաժարվել է պայմանագիրը երկարաձգելուց, իսկ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետի ուշացումը կապված է Պատվիրատուի կողմից մատակարարման ենթակա ապրանքների չափսերի ուշ տրամադրման հետ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների կատարման ժամկետը 20.04.2012թ. սահմանելու դեպքում Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի դրույթը կիրառելի չէր լինի, քանի որ 1-ին խմբաքանակի մի մասը արդեն իսկ մատակարարվել է (04.04.2012թ. և 10.04.2012թ.), իսկ մյուս մասի մատակարարման դեպքում կստացվեր, որ Ընկերությունը պայմանագրով ստանաձնած պարտավորությունը խախտել է ընդամենը մեկ անգամ:

3. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 31.07.2013թ. թիվ 09/032-1058 գրությամբ դիմել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 29.08.2013թ. թիվ ԴԴ-3-Ե-4282 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև ՀՀ դատական կարգադրիչների ծառայությանն անհրաժեշտ համազգեստի ձեռքբերման համար 05.03.2012թ. կնքվել է թիվ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագիրը, ըստ որի պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 27.203.424 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով «Գոռ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորության ոչ պատշաճ կատարելու փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.3, 7.2 կետերը՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 05.03.2012թ. կնքված թիվ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքների գնման պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով տրամադրվել են համապատասխան գերատեսչություններին (Լիազոր մարմնին և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին):

Ի լրումն 29.08.2013թ. N ԴԴ-3-Ե-4281 գրության՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 04.09.2013թ. N ԴԴ-1-Ե-4367 գրությամբ տեղեկացրել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, համաձայն ՀՀ դատական կարգադրիչների ծառայությանն անհրաժեշտ համազգեստի ձեռքբերման համար 05.03.2012թ. կնքված թիվ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագրով նախատեսված դրույթների, «Գոռ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկել և հաշվանցել է տույժ:

Ի լրումն 04.09.2013թ. N ԴԴ-1-Ե-4367 գրության՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 04.10.2013թ. N ԴԴ-1-Ե-5032 գրությամբ հայտնել է, որ 05.09.2013թ. N ԴԴ-1-4458 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին տեղեկացրել է հաշվարկված, հաշվանցված, ինչպես նաև ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա տույժերի մասին՝ կից ներկայացնելով ուղարկված ծանուցումները հավաստող փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնում 2013թ. օգոստոսի 30-ին ժամը 16:30-ին և 17.03.2015թ. ժամը 15:30-ին ՍՑ-ԳԲԽ 09/13 բողոքի շրջանակներում կազմակերպված լսումների ընթացքում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացուցիչները պնդեցին 29.08.2013թ. գրություններով ներկայացրած փաստարկները:

4. ՍՑ-ԳԲԽ-09/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

2. Ընթացակարգի արդյունքում «Գոռ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող ընթացակարգի 1-ին, 2-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով և «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 05.03.2012թ. կնքվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով 27.203.424 ՀՀ դրամ ընդհանուր գնով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

3. Պայմանագրի հավելված N 2-ով՝ գնման ժամանակացույցով 1-ին և 2-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքի, որի ընդհանուր արժեքը կազմել է 10.628.680 ՀՀ դրամ, 1-ին խմբաքանակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2012թ. 1-ին եռամսյակը, այսինքն՝ **մինչև 2012թ. մարտի 31-ը:**

4. «Գոռ» ՍՊԸ-ն 07.03.2012թ. թիվ 0015 գրությամբ դիմել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ հայտնելով, որ համաձայն 05.03.2012թ. կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագրի մատակարարման ժամանակացույցի՝ «Կարգադրիչի համազգեստ» (բաճկոն, տաբատ) և «Կարգադրիչի համազգեստ» (կիտել, կիսաշրջազգեստ) չափաբաժիններով նախատեսված ապրանքների ամբողջ խմբաքանակի շուրջ 70 տոկոսը նախատեսվել է մատակարարել մարտ ամսին, այսինքն՝ 20 օրվա ընթացքում, որն իրատեսական չէ: Ընկերությունը տեղեկացրել է, որ 07.03.2012թ. դրությամբ Պատվիրատուի կողմից չեն տրամադրվել մատակարարման ենթակա համազգեստների չափսերը: Ելնելով վերոնշվածից՝ «Գոռ» ՍՊԸ-ն խնդրել է հնարավորության դեպքում «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» պայմանագրի վերը նշված հանդերձանքի մատակարարումը տեղափոխել մարտ ամսից ապրիլ ամիս:

5. Պատվիրատուն 07.03.2012թ. թիվ ԴԴ-3-Ե-1070 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին ներկայացրել է Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքների չափսերը՝ միաժամանակ հայտնելով, որ պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետի երկարացման հնարավորության վերաբերյալ «Գոռ» ՍՊԸ-ին կտեղեկացվի լրացուցիչ:

6. Պատվիրատուն 12.03.2012թ. թիվ ԴԴ-3-Ե-8085 գրությամբ դիմել է «Գոռ» ՍՊԸ-ին և հայտնել, որ հաշվի առնելով պատվիրատուի արտադրական շահերը, գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարման մասով ժամկետի երկարաձգումը մեկ ամսով նպատակահարմար չէ:

7. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 04.04.2012թ. թիվ ԴԴ-3-Ե-1547 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 05.03.2012թ. կնքված N «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով՝ 1-ին եռամսյակի համար նախատեսված ապրանքների մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 31.03.2012թ., սակայն մինչ տվյալ օրը ժամանակացույցով սահմանված ապրանքները դեռևս մատակարարված չեն:

8. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 62-րդ և 63-րդ կետերով և հիմք ընդունելով 05.03.2012թ. կնքված թիվ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագրի 7.2 կետը, Պատվիրատուն 01.04.2012թ-ից «Գոռ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկել է տույժ՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով: Պատվիրատուն միաժամանակ տեղեկացրել է, որ Ընկերության կողմից ստանձնած պարտակա-նությունները պարբերաբար չկատարելու դեպքում Պատվիրատուն պարտավորված է կիրառել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ:

9. «Գոռ» ՍՊԸ-ն 28.04.2012թ. թիվ 0067 գրությամբ Պատվիրատուի 04.04.2012թ. N ԴԴ-3-Ե-1547 գրության վերաբերյալ հայտնել է, որ վերջինս պայմանագիրը ստանալուց հետո անմիջապես Պատվիրատուին հայտնել է, որ նշված մատակարարման ժամանակացույցը իրատեսական չէ և հնարավոր չէ իրականացնել արտադրությունը և մակատարարումը 2012 թ. մարտ ամսի ընթացքում այն դեպքում, երբ մարտի 5-ին նոր կնքվել է պայամանգիրը, ինչպես նաև խնդրել է մեկ ամսով ժամանակացույցը երկարաձգել, որը Պատվիրատուի կողմից մերժվել է:

10. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 20.04.2012թ. թիվ ԴԴ-1-Ե-1825 գրությամբ դիմել է «Գոռ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ դեռևս 04.04.2012 թվականի թիվ ԴԴ-3-Ե1547 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին տեղեկացրել է ՀՀ դատական կարգադրիչների ծառայությանն անհրաժեշտ համազգեստի ձեռքբերման համար 05.03.2012թ. կնքված

«ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքների գնման պայմանագրի առաջին եռամսյակով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետի խախտումով պայմանավորված տույժի, ինչպես նաև՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտականությունները պարբերաբար չկատարելու դեպքում Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.1.1 կետով նախատեսված պատասխանատվության այլ միջոցների կիրառման մասին: Պատվիրատուն հայտնել է, որ «Գոռ» ՍՊԸ-ի կողմից մատակարարումը կատարվել է 04.04.2012 թվականին՝ 3 օր ուշացումով, թիվ Ա1044751776 ապրանքների մատակարարման հարկային հաշվով 1.703.376.0 ՀՀ դրամ գումարի չափով, որի դիմաց, ուշացած օրերի համար հաշվարկված տույժը կազմել է 15.943.0 ՀՀ դրամ, իսկ երկրորդ մատակարարումը կատարվել է 10.04.2012 թվականին՝ 10 օր ուշացումով, թիվ Ա6212045863 ապրանքների մատակարարման հարկային հաշվով՝ 759.600.0 ՀՀ դրամ գումարի չափով, որի դիմաց ուշացած օրերի համար հաշվարկված տույժը կազմել է՝ 26.776 ՀՀ դրամ: Մնացած 8.156.700.0 գումարի ապրանքները մինչ օրս չի մատակարարվել և 20.04.2012 թվականի դրությամբ հաշվարկվել է տույժ՝ 40.828,5 ՀՀ դրամի չափով: Քանի որ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 2 հավելվածի 1-ին եռամսյակով նախատեսված ապրանքների մատակարարման համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո մինչ տվյալ օրը ժամանակացույցով սահմանված ապրանքներն ամբողջությամբ մատակարարված չեն (554 հատ համազգեստի փոխարեն մատակարարվել է 124), ինչպես նաև՝ հիմք ընդունելով 05.03.2012 թվականին կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագրի 3.1.1 և 3.1.7 կետերը, ըստ որի՝ Պատվիրատուն իրավունք ունի Պայմանագրով նախատեսված ապրանքներից հրաժարվել, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն միակողմանի լուծել Պայմանագիրը, տեղեկացրել է, որ նույն ծանուցումը ստանալու օրվանից «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 05.03.2012թ. կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված:

11. «Գոռ» ՍՊԸ-ն 07.05.2012թ. թիվ 123-66 գրությամբ Պատվիրատուի 20.04.2012թ. թիվ ԴԴ-1-Ե-1825 գրության վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝

բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուի հետ պայմանագիր կնքող անձը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում, ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման ժամկետը պետք է սահմանվի առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից, ինչը տվյալ դեպքում չի պահպանվել: «Գոռ» ՍՊԸ-ն գտել է, որ խախտվել է Ընկերության իրավունքները և Ընկերությանը երբեք չի առաջարկվել կատարելու պայմանագիրը 30 աշխատանքային օրվա ընթացքում ոչ հրավերով և ոչ էլ պայմանագիրը կնքելիս: Այնուամենայնիվ, Ընկերությունը 2012թ. ապրիլի 28-ի գրությամբ պատրաստակամություն է հայտնել վճարելու տույժերը՝ պայմանագրի 7.2 կետի համաձայն, սակայն Պատվիրատուն դա նույնպես բավարար չի համարել և որոշել է լուծել պայմանագիրը:

12. ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.05.2012թ. թիվ 1.1/13.1/6305-12 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ՀՀ դատական դեպարտամենտ » ՊԿՀ-ի 07.05.2012թ. թիվ ԴԴ-1-Ե-2045 գրությունը՝ խնդրելով ուսումնասիրել «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

13. «Գոռ» ՍՊԸ-ն 14.07.2012թ. Կենտրոնին է ներկայացրել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը դադարեցնելու պահանջի մասին բողոք, որը Գնումների բողոքարկման խորհուրդը 30.07.2012թ. կայացրած որոշմամբ բավարարել է մասնակի՝ դադարեցնելով «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնումներ կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը ընթացակարգի 1-ին և 2-րդ (կարգադրիչի համազգեստ՝ բաճկոն և կիտել) չափաբաժինների մասերով՝ նույն չափաբաժինների մասերով «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնումներ կատարելու ընթացակարգը հայտարարելով ապօրինի:

14. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 28.08.2012թ. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին է ներկայացրել Գնումների բողոքարկման խորհրդի 30.07.2012թ. թիվ ԳԲԽ 28/12 բողոք քննած հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմում, որը 26.12.2012թ. դատարանը բավարարել է՝ անվավեր ճանաչելով 30.07.2012թ. թիվ ԳԲԽ 28/12 որոշումը:

15. Կենտրոնը 29.01.2013թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին է ներկայացրել վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.04.2013թ. որոշմամբ մերժվել է և օրինական ուժի մեջ է թողնվել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2012թ. վճիռը:

16. Կենտրոնը 13.05.2013թ. ՀՀ վճռաբեկ դատարանին է ներկայացրել վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 19.06.2013թ. որոշմամբ վերադարձվել է:

17. ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով պաշտոնական ընթացակարգով Գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է բողոք:

18. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 26.07.2013թ. թիվ 20/394 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 20.11.2012թ. հայտ է ներկայացրել «Գոռ» ՍՊԸ-ն՝ կցելով հայտի պատճենը:

19. «Գոռ» ՍՊԸ-ի կողմից 05.03.2012թ. կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման հետևանքով հաշվարկված տուգանքի վճարումը հավաստող որևէ ապացույց մինչ օրս Կենտրոնին չի ներկայացվել:

5. ՍՑ-ԳԲԽ-09/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը, «Գոռ» ՍՊԸ-ի 27.08.2013թ. գրությամբ ներկայացված կարծիքը, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 29.08.2013թ., 04.09.2013թ. և 04.10.2013թ. Կենտրոնին ներկայացված համապատասխանաբար ԴԴ-3-Ե-4282, ԴԴ-1-Ե-4367 և ԴԴ-1-Ե-5032 գրությունները, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 05.03.2012թ կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով պայմանագիրը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-րդ կետի 5-րդ

ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Գոռ» ՍՊԸ-ի միջև 05.03.2012թ. կնքված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-1» ծածկագրով Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Գոռ» ՍՊԸ-ն պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված տարբեր տեսակի հանդերձանք (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 3.4.2. կետով սահմանվել է, որ «Գոռ» ՍՊԸ-ն պարտավոր է ապրանքը Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) բազմիցս խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, Ընթացակարգի 1-ին (կարգադրիչի համազգեստ բաճկոն, տաբատ) և 2-րդ (կարգադրիչի համազգեստ կիտել, կիսաշրջազգեստ) չափաբաժիններով համապատասխանաբար 500 հատ և 54

հատ գնման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2012թ. 1-ին եռամսյակը՝ **այսինքն մինչև 2012թ. մարտի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման 04.04.2012թ. N Ա 1044751776 հարկային հաշվով՝ **04.04.2012թ.** դրությամբ «Գոռ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 30 լրակազմ (կարգադրիչի համազգեստ բաճկոն, տաբատ) 569.700 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և 54 լրակազմ (կարգադրիչի համազգեստ կիտել, կիսաշրջազգեստ) 1.133.676 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ **10.04.2012թ.** N Ա 6212045863 հարկային հաշվով՝ 40 լրակազմ (կարգադրիչի համազգեստ բաճկոն, տաբատ) 759.600 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ապրանքներ:

Այսպիսով, «Գոռ» ՍՊԸ-ի կողմից 10.04.2013թ. դրությամբ Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքից (կարգադրիչի համազգեստ բաճկոն, տաբատ) մատակարարվել է ընդամենը **70 միավոր**, մինչդեռ մինչև **2012թ. մարտի 31-ը** Ընկերությունը այդ չափաբաժնով պետք է մատակարարեր **500 միավոր ապրանք,** այսինքն Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարումը Ընկերության կողմից իրականացվել է թերի և ապրանքի մատակարարման համար Պայմանագրով սահմանված ժամկետի խախտմամբ:

Պայմանագրի 2-ր չափաբաժնով նախատեսված 54 միավոր ապրանքը (կարգադրիչի համազգեստ կիտել, կիսաշրջազգեստ) «Գոռ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 04.04.2012թ., մինչդեռ Ընկերությունը նշված ապրանքը պետք է մատակարարեր մինչև **2012թ. մարտի 31-ը,** այսինքն Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարումը Ընկերության կողմից իրականացվել է ապրանքի մատակարարման համար Պայմանագրով սահմանված ժամկետի խախտմամբ:

Նկատի ունենալով, որ «Գոռ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտվել են ավելի քան մեկ անգամ և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև օրս Ընկերության կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը 20.04.2012թ. խախտում թույլ տալուց հետո ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 20.11.2012թ. հայտ է ներկայացրել, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Գոռ» ՍՊԸ-ին երեք տարի ժամկետով ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-09/13 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան